Government Offices of Sweden

oxYGen

Wnet

Կանանց մասնակցությունը Երևանի ավագանու ընտրություններում

Վերլուծական տեղեկանք

ՀԱՎԱՍԱՐ

Տեղեկանքը կազմված է «ՀԱՎԱՍԱՐ». Խթանելով կանանց քաղաքական մասնակցությունը Հայաստանում» ծրագրի շրջանակում անցկացված Երևանի ավագանու ընտրություններում կանանց մասնակցության մշտադիտարկման արդյունքների հիման վրա: Ծրագիրն իրականացվում է «ՕքսԵՋեն» հիմնադրամի կողմից՝ ՊրոՄեդիա-Գենդեր ՀԿ-ի գործընկերությամբ և Շվեդիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ:

Բովանդակություն

1. Կանայք նորընտիր ավագանու կազմում
2. Կին թեկնածուները կուսակցությունների ընտրական ցուցակներում
3. Կին թեկնածուների քարոզարշավի առանձնահատկությունները
4. Քաղաքի արդար կառավարման սկզբունքները նախընտրական ծրագրերում

Government Offices of Sweden ncs oxYgen

2018 թ. սեպտեմբերի 23-ին կայացած Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների արդյունքում Երևանի նորընտիր ավագանու 65 անդամից միայն 18-ն են կին, ինչը 27.6% է կազմում: Ավագանու նախորդ կազմի համեմատ կանանց ներկայացվածության թիվն ավագանիում նույնն է մնացել, թեպետ այս արտահերթ ընտրություններում առաջադրված կուսակցությունների ցուցակներում կին թեկնածուների թիվն ավելի էր, քան նախորդ ընտրություններում, և միջինը 36,2% էր:

Կանայք նորընտիր ավագանու կազմում

Երևանի ավագանու սեպտեմբերի 23-ին կայացած արտահերթ ընտրություններին մասնակցել է 12 քաղաքական ուժ՝ 8 կուսակցություն և 4 դաշինք:
Ընտրելու իրավունք ունեցող 848.346 քաղաքացուց Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների քվեարկությանը մասնակցել են 370.365-ը կամ ընտրողների 43,65 տոկոսը: Ընտրություններին մասնակցող 12 քաղաքական ուժերից 6-ին չի հաջողվել հատել 1 տոկոսի շեմը, երեքը ստացել են 1-2% ձայն:

Ընտրությունների վերջնական արդյունքները
(սեպտեմբերի 30, 2018)

Կուսակցություն /Դաշինք		Քվե	%	Մանդատ
1.	«Իմ քայլը» դաշինք	294 092	81,06%	57
2.	ԲՀԿ	25 218	6,95%	5
3.	«Լույս» դաշինք	18 114	4,99%	3
4.	ՀՅԴ	5882	1,62%	0
5.	«Երկիր ծիրանի»	5059	1,39%	0
6.	«Օրինաց երկիր»	3947	1,09%	0
7.	«Երևանցիներ» դաշինք	2986	0,82%	0
8.	«Ժառանգություն» կուսակցություն	2709	0,75%	0
9.	«Երևանի հանրություն» դաշինք	2502	0,69%	0
10.	«Ժողովրդավարական ուղի» կուսակցություն	799	0,22%	0
11.	Ռեֆորմիստների կուսակցություն	792	0,22%	0
12.	«Հայք» կուսակցություն	692	0,19%	0

Աղբյուրը՝ ԿԸՀ

Ընտրությունների արդյունքների համաձայն՝ Երևանի ավագանու կազմում երեք ուժ է ընդգրկվել՝ «Իմ քայլը» դաշինքը (81,06%), «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը (6,95% տոկոս), «Լույս» դաշինքը (4,99 %): Թեև «Լույս» դաշինքը չի հաղթահարել անցումային շեմս ավագանու կազմում ընդգրկվելու համար (դաշինքների համար այն կազմում է 8 տոկոս, իսկ կուսակցությունների համար՝ 6 տոկոս), նրա օգտին գործեց օրենսդրության այն դրույթը, որի համարձայն՝ ներկայացուցչական մարմնի կազմում ցանկացած պարագայում պետք է ներկայացված լինի առնվազն 3 քաղաքական ուժ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ եթե ավագանու ընտրությունների արդյունքով ընտրություններին մասնակցող կուսակցություններից մեկը ստանում է ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա այդ կուսակցության թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձը օրենքի ուժով համարվում է ընտրված քաղաքապետ: Այդ դրույթի համաձայն՝ «Իմ քայլը» դաշինքի ցուցակը գլխավորող Հայկ Մարությանը ստանձնեց քաղաքապետի պաշտոնը:

Կանանց կողմից ղեկավարվող քաղաքական ուժերից միայն մեկն ընդգրկվեց ավագանու կազմում՝ «Բարգավաճ Հայաստանը»: Սակայն այդ կուսակցության ցուցակը գլխավորող Նաիրա Զոհրաբյանը դիմեց ինքնաբացարկի՝ պահպանելով իր պատգամավորական մանդատը: Ընտրություններից անմիջապես հետո ինքնաբացարկ հայտնած վեց թեկնածուներից երկուսն էին կին: Նրանց թվում,

բացի Նաիրա Զոհրաբյանից, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված Նազիկ Ավդալյանն էր: Ավելի ուշ՝ մանդատները վերցնելուց հետո, ինքնաբացարկ է հայտնել ևս մեկ կին՝ Սրբուհի Ղազարյանն «Իմ քայլը» խմբակցությունից, ով կշարունակի վարչապետի խորհրդականի իր աշխատանքը կառավարությունում:
Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների արդյունքում «Իմ քայլը» դաշինքը ստացավ 57 մանդատ, «Բարգավաճ Հայաստանը»՝ 5, «Լույս» դաշինքը՝ երեք: Մանդատներից 18-ը կամ 27.6 %-ը բաժին են հասել կանանց: Այս պատկերը սակայն վերջնական չէ, քանի որ, ըստ նախնական տեղեկությունների, հնարավոր է մանդատներից հրաժարում՝ վարչական շրջանների նոր ղեկավարների նշանակումների համատեքստում:

«Իմ քայլը» դաշինքի ստացած 57 մանդատից 15-ը կամ 26.3 %-ը բաժին էր ընկել կանանց: Նրանց թվում են՝ Սրբուհի Ղազարյանը, Լուսինե Բաղալյանը, Իզաբելլա Աբգարյանը , Նարինե Խաչատուրյանը , Գայանե Մելքոմյանը, Գայանե Աբրահամյանը , Լիլիթ Պիպոյանը , Եվա Թովմասյանը , Գայանե Եղիազարյանը, Սոնա Ղազարյանը , Արուսյակ Զուլիակյանը , Գայանե Վարդանյանը, Օվսաննա Հովսեփյանը, Սաթենիկ Մկրտչյանը , Հասմիկ Խաչունցը:
ԲՀԿ խմբակցության հինգ անդամից մեկն է կին, ինչը 20% է կազմում: Մայրաքաղաքի ավագանու անդամի մանդատ է ստացել Հռիփսիմե Առաքելյանը :
«Լույս» դաշինքի խմբակցության երեք անդամից երկուսը կամ 67%-ը կանայք են՝ Անի Խաչատրյանը և Անի Սամսոնյանը:
Համեմատության համար՝ կին թեկնածուները «Լույս» դաշինքի ընտրական ցուցակում 35,7% էին կազմում, «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ցուցակում՝ 30,7% և «Իմ քայլը» դաշինքի ցուցակում՝ 28,8 % էին:

Նորընտիր ավագանու երեք խմբակցություններից ոչ մեկը կին չի ղեկավարում, սակայն քարտուղարների պաշտոններում երեք խմբակցությունում էլ կանայք են ներկայացված: Ավագանու 4 հանձնաժողովներից երկուսը կանայք են ղեկավարում: Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահ է ընտրվել Սաթենիկ Մկրտչյանը, իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ՝ Արուսյակ Ջուլհակյանը:
Հատկանշական է նաև Երևանի ավագանու տարիքային կազմը, որն էականորեն երիտասարդացել է: Հատկապես, կին անդամների շրջանում գերակշռում են երիտասարդ տարիքի՝ 25-40 տարեկան կանայք:

Կին թեկնածուները կուսակցությունների ընտրական ցուցակներում

Երևանի ավագանու արտահերթ ընտրություններին ավագանու 65 տեղի համար հայտ էր ներկայացրել 982 թեկնածու, որոնցից 356-ը կամ 36,2% կանայք էին: Համեմատության համար՝ նախորդ ընտրություններին մասնակցած երեք քաղաքական ուժերն իրենց ցուցակներում 32% կին թեկնածուներ էին ընդգրկել:

Քաղաքապետի 12 թեկնածուներից երեքը կանայք էին

Այս ընտրություններն աննախադեպ էին կանանց հավակնությունների իմաստով, քանի որ առաջին անգամ Երևանի քաղաքապետի պաշտոնի համար երեք կին թեկնածուներ էին պայքարում: Մասնակից 12 քաղաքական ուժերից երեքի ցուցակները կանայք էին գլխավորում՝ ՀՀ ԱԺ պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը, «Երկիր ծիրանի» կուսակցության նախագահ Զարուհի Փոստանջյանը և ճարտարապետ Անահիտ Թարխանյանը: Ինչպես հայտնի է, Երևանը երբեք կին քաղաքապետ չի ունեցել, և մինչ այս ընտրությունները ընդամենը երկու կին է առաջադրվել այդ պաշտոնում (Հեղինե Բիշարյանը՝ 2009-ին և Զարուհի Փոստանջյանը՝ 2017-ին):

Կին թեկնածուները ընտրական ցուցակներում

36,2%

ԲՀԿ

Թեկնածու/կին 192/59 **30,7%**

Առաջին տասնյակ

1 Նաիրա Զոհրաբյան · 6 Նազիկ Ավդալյան · 10 Հռիփսիմե Առաքելյան

«ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ» ԴԱՇԻՆՔ

Թեկնածու/կին 46/21 **45,6%**

Առաջին տասնյակ

1 Անահիտ Թարխանյան · 4 Անի Երեմյան · 7 Մարիամ Շահինյան · 8 Միլվա Արամյան · 10 Արմինե Դավթյան

«ԵՐԵՎԱՆՑԻՆԵՐ» ԴԱՇԻՆՔ

Թեկնածու/կին 53/22 **41,5%**

Առաջին տասնյակ

4 Անահիտ Եղոյան · 8 Ռուզանա Սամսոնյան · 10 Արմինե Ռնազան

«ԵՐԿԻՐ ԾԻՐԱՆԻ»

Թեկնածու/կին 47/24 **51%**

Առաջին տասնյակ

1 Ցարուհի Փոտանջյան · 5 Միլվա Վարդանյան · 6 Մարինա Կրիգոյան · 7 Լիլիթ Քլոնգյան

«ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ»

Թեկնածու/կին 48/21 **43,7%**

Առաջին տասնյակ

4 Սեդա Ադբալյան · 8 Գայանե Աբասյան

«ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒԺԻ»

Թեկնածու/կին 32/12 **37,5%**

Առաջին տասնյակ

4 Ելենա Դանիելյան · 8 Մարիա Նադիրյան

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԴԱՇԻՆՔ

Թեկնածու/կին 170/49 **28,8%**

Առաջին տասնյակ

2 Սրբուհի Ղազարյան · 6 Լուսինե Բադալյան · 9 Իզաբելլա Աբգարյան

«ԼՈՒՅՍ» ԴԱՇԻՆՔ

Թեկնածու/կին 112/40 **35,7%**

Առաջին տասնյակ

3 Անի Խաչատրյան · 4 Անի Սամսոնյան · 5 Թեհմինա Վարդանյան · 6 Անահիտ Բախչյան

ՀՅԴ

Թեկնածու/կին 77/23 **29,8%**

Առաջին տասնյակ

4 Ալեսյա Բեջանյան · 8 Գայանե Եղիազարյան

«ՀԱՅՔ» (ՀԱՅԿԱԶՈՒՆՆԵՐ)

Թեկնածու/կին 60/20 **33,3%**

Առաջին տասնյակ

4 Արփինե Սահակյան · 8 Լիանա Բանգոյան

«ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐ»

Թեկնածու/կին 29/12 **41,3%**

Առաջին տասնյակ

4 Լիլիթ Հովակիմյան · 7 Գայանե Ղուլյան · 8 Լիանա Պողոսյան · 9 Անահիտ Վարդանանց · 10 Աստղիկ Գրիգորյան

ՕԵԿ

Թեկնածու/կին 116/53 **45,6%**

Առաջին տասնյակ

4 Մարինե Քոչարյան · 8 Լիանա Մանուկյան

Կուսակցությունները հատել են իրենց ցուցակներում 30/70 համամասնության շեմը

Երևանի ավագանու արտահերթ ընտրություններում թեկնածուների սեռերի համամասնությունն ընտրական ցուցակներում կարգավորվել է գործող ՀՀ ընտրական օրենսգրքի «Անցումային դրույթներ» բաժնի 144-րդ հոդվածի 14-րդ կետով, որը սահմանում է. «Մինչև 2021 թվականի հունվարի 1-ը Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրությունների ժամանակ կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի համապետական ընտրական ցուցակի առաջին մասում 1-ին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով քառյակներում (1-4, 1-8, 1-12 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 75 տոկոսը...»:

Ընտրությունների պահին դեռևս պարզ չէր՝ ի՛նչ փոփոխություններ էին նախատեսվում Ընտրական օրենսգրքում այդ մասով: Մինչդեռ Ընտրական օրենսդրության բարեփոխումների հայեցակարգի նախնական քննարկումների ընթացքում կանանց խնդիրներով զբաղվող ՀԿ-ները առաջարկել էին ՀՀ վարչապետին առընթեր ընտրական օրենսդրության բարեփոխումների հանձնաժողովին բարելավել 30/70-ի համամասնությունը՝ ֆիքսելով 40/60 կամ 50/50 համամասնությունը, ինչն ավելի համահունչ է միջազգային փաստաթղթերով ամրագրված հանձնարարականներին: Սակայն քաղաքական ուժերի մեծ մասը վերապահումով էր վերաբերվում ընտրական ցուցակներում սեռերի 40/60 հարաբերակցություն ամրագրելու առաջարկներին՝ պատճառաբանելով դա կանանց ներուժը ներգրավելու հետ կապված խնդիրներով:

Հոկտեմբերին հրապարակված Ընտրական օրենսդրության բարեփոխումների հայեցակարգով և նախագծով նախատեսվում է, որ Ազգային ժողովի, Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու հաջորդ ընտրությունների ժամանակ պետք է գործի գործող օրենսգրքի 83.4-րդ, 83.10-րդ և 130.2-րդ կետերով ամրագրված քվոտան, ըստ որի առաջիկա խորհրդարանական ընտրություններում գործելու է կուսակցությունների ցուցակներում 30/70 սեռերի համամասնությունը:

Դիտարկելով Երևանի ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցող 12 քաղաքական ուժերի ընտրական ցուցակներում կին թեկնածուների ներկայացվածությունը գենդերային քվոտայի բարելավման տեսանկյունից՝ կարելի է փաստել, որ կանանց ներուժի հետ կապված մտահոգություններն իրականում խիստ չափազանցված են: Քաղաքական ուժերը միջինը 36,2% կին թեկնածուներ էին ներկայացրել: Դա ավելին է, քան գործող Ընտրական օրենսգրքով սահմանված 25%-անոց քվոտան և փոփոխություններով առաջարկվող 30%-ը, որը, ըստ էության, կարելի է անցած փուլ համարել: Եվ դա կարևոր փաստարկ է սեռերի համամասնությունը սահմանող քվոտան բարելավելու օգտին: Համեմատության համար նշենք, որ նախորդ ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերն իրենց ցուցակներում նույնպես 30%-ից բարձր՝ 32% կին թեկնածուներ էին առաջադրել:



Այլ հարց է, որ Երևանի ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերը, բարի կամք դրսևորելով և իրենց ցուցակներում միջինը 36,2% կին թեկնածուներ ներկայացնելով, ցուցակների առաջին հնգյակում ներգրավել էին 25% կին թեկնածուներ, իսկ առաջին տասնյակում՝ 30,8%: Ընտրություններին մասնակցած 12 քաղաքական ուժերից միայն մեկի՝ «Լույս» դաշինքի ցուցակի առաջին հնգյակում էր երեք կին ընդգրկված, ու միայն երկուսի՝ «Երևանի հանրություն» դաշինքի ու «Երկիր ծիրանի» կուսակցության ցուցակների առաջին հնգյակում՝ երկու կին: Մնացած քաղաքական ուժերը գերադասել էին մեկ օրենքով նախատեսված շրջանակներում և առաջին հնգյակում ընդգրկել մեկ կին թեկնածու՝ հիմնականում 4-րդ հորիզոնականում, ինչպես ամրագրված է օրենքում: Այստեղից կարելի է եզրակացնել, որ կուսակցություններն իրականում խնդիր են ունեցել ոչ թե կանանց ներգրավելու, այլ առաջնային դիրքերում նրանց ներկայացնելու հետ:

Քաղաքական ուժերի կեսը 40-50% կին թեկնածուներ էին ներկայացրել

Ընտրություններին մասնակցած 12 քաղաքական ուժերի կեսը իրենց ցուցակներում ներկայացրել էին 40-50% կին թեկնածուներ: Առավել մեծ թվով կանայք՝ 51%, ներկայացված էին «Երկիր ծիրանի» կուսակցության կողմից: Առավել քիչ թվով կանայք էին ներկայացված «Իմ քայլը» դաշինքի ցուցակում՝ 28,8%, թեպետ իշխանության ամենաբարձր մակարդակում շեշտադրվում էր որոշումների կայացման գործընթացում կանանց դերի ու մասնակցության ավելացման անհրաժեշտության մասին, իսկ ԸՕ փոփոխությունները քննարկելիս ԱԺ «Ելք» խմբակցության ղեկավար Լենա Նազարյանն առաջարկել էր կանանց ներկայացվածությունը բարձրացնելու նպատակով սահմանել ընտրական ցուցակներում 40/60 համամասնության տարբերակը:

ՀԱՎԱՍԱՐ

Կանանց ներկայացվածությունը գերազանցում էր 45%-ը «Երկիր ծիրանի» (51%), «Օրինաց երկիր» կուսակցությունների (45,6%) և «Երևանի հանրություն» դաշինքի (45,6%) ընտրական ցուցակներում, նրանց հաջորդում էին «Ժառանգություն» (43,7%), «Ռեֆորմիստներ» (41,3%) կուսակցությունները, «Երևանցիներ» դաշինքը (41,5%): Կանայք 30%-ից ցածր ներկայացվածություն ունեին «Իմ քայլը» դաշինքի ու ՀՅԴ կուսակցության ցուցակներում:
Առաջին տասնյակում առավել շատ՝ 50% կին թեկնածուներ էին ներկայացրել «Երևանի հանրություն» դաշինքը և «Ռեֆորմիստներ» կուսակցությունը, նրանց հաջորդում էին «Լույս» դաշինքը և «Երկիր ծիրանի» կուսակցությունը, որոնց առաջին տասնյակում կին թեկնածուները 40% էին կազմում:

Կին թեկնածուների քարոզարշավի առանձնահատկությունները

Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների քարոզարշավը պաշտոնապես մեկնարկեց սեպտեմբերի 10-ին և տևեց ընդամենը 12 օր՝ մինչև սեպտեմբերի 21-ը: Այդպիսի աննախադեպ սեղմ ժամանակահատվածում քաղաքական ուժերը ստիպված էին բավականին ինտենսիվ կերպով անցկացնել իրենց քարոզարշավը: Թերևս այս ժամկետներով էր պայմանավորված այն փաստը, որ որոշ կուսակցություններ հանրությանը բավականին ուշ ներկայացրեցին իրենց նախընտրական ծրագրերը:
Քաղաքապետի կին թեկնածուները հայտարարեցին ընտրություններին մասնակցելու իրենց մտադրության մասին առաջիններից մեկը. Զարուհի Փոստանջյանը՝ դեռևս հուլիսին, իսկ Նաիրա Զոհրաբյանը և Անահիտ Թարխանյանը՝ օգոստոսին՝ դրանով իսկ ազդարարելով իրենց քարոզարշավի ոչ պաշտոնական մեկնարկը:

Նաիրա Զոհրաբյանը միանգամից հայտարարեց, որ իր ծրագրի հիմքում կանաչ և խելացի քաղաքի կոնցեպտն է դրվելու: «Դա իմ մոտեցումս է, որպես կին թեկնածուի՝ մենք հասկանում ենք կանաչ քաղաք, մաքուր քաղաք, օդի աղտոտվածությունից զերծ քաղաք», – ասել էր նա: Դրա հետ մեկտեղ, առաջադրման պահից նրա նկատմամբ բացահայտվեց, այսպես կոչված, խանդն ու անհանդուրժողականությունն որոշ տղամարդ կուսակիցների կողմից: Եվ դա այն դեպքում, որ նրա թեկնածությունը միաձայն էր ընդունվել ԲՀԿ քաղխորհրդի կողմից: Նաիրա Զոհրաբյանը, զերծ մնալով մեկնաբանություններից, հայտարարեց, որ տեսնում է իրեն քաղաքապետի պաշտոնում, ավելին՝ կարծում է, որ հաղթելու իրական հնարավորություն ունի: «Մայրաքաղաքը վերջապես պետք է ունենա կին քաղաքապետ», - հայտարարեց նա:

Քարոզարշավի մեկնարկից առաջ Նաիրա Զոհրաբյանը, դիմելով քաղաքապետի պաշտոնում առաջադրված կին թեկնածուներին, հանդես էր եկել համատեղ հանրահավաք անցկացնելու ուշագրավ առաջարկով. «Կուզենայի, որ երեք կին թեկնածուներով մենք միասին մի քանի քարոզարշավի մասնակցեինք նույն տեղում, նույն օրը»: Իրականում, այդ առաջարկը կանանց համերաշխությանն ուղղված առաջին փորձն էր Հայաստանի քաղաքական դաշտում:

Բավականին ակտիվ սկսեց իր քարոզարշավը նաև Անահիտ Թարխանյանը, ով առաջադրվել էր «Երևանի հանրություն» դաշինքի կողմից: Քարոզարշավի հիմքում Երևանի զարգացման նոր ծրագրի ներկայացնումս էր, կարգախոսը՝ «Ի շահ հարազատ քաղաքի»: Մինչ քարոզարշավի պաշտոնական մեկնարկը նա փորձեց գրավել հանրության ուշադրությունը քաղաքական բնույթի ակցիայով՝ հանդես գալով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ

Տիգրան Մուկուչյանի հրաժարականի պահանջով:
Զարուհի Փոստանջյանը, ով նախորդ ավագանու կարճատև գործունեության ընթացքում մշտապես աչքի էր ընկել իր ակտիվությամբ, մինչ քարոզարշավի պաշտոնական մեկնարկը լռություն էր պահպանում: Ի տարբերություն նախորդ ընտրությունների, նա բավական հանգիստ ու հավասարակշռված քարոզարշավ էր տանում՝ ներկայացնելով իր ծրագրի դրույթները՝ նախորդ իշխանությունների բացթողումների համատեքստում և իր նախկին քաղաքական փորձառության շեշտադրումներով: Քարոզարշավի հիմքում «Գալիս եմ ծառայելու» ուշագրավ կարգախոսն էր:
Ընդհանուր առմամբ, քարոզարշավի ընթացքում կին թեկնածուները բավականին ակտիվ էին ԶԼՄ-ների և հանրության հետ իրենց շփումներում: Ավելին, Նաիրա Զոհրաբյանը համարվում էր առաջատար ուժի՝ «Իմ քայլը» դաշինքի հիմնական հակառակորդը: Անահիտ Թարխանյանը և Զարուհի Փոստանջյանը նույնպես առաջատարների դերում չէին ընկալվում: Այնուամենայնիվ, քարոզարշավի ընթացքում նկատվեցին նաև սեքսիզմի դրսևորումներ: Այսպես, բավականին ակտիվ շրջանառվում էր «տղամարդ կին» հայտնի թեզը: «Մարդ, որը, կին լինելով, ավելի շատ տղամարդ է, քան պաշտոնյա տղամարդիկ, որ իրենց տղամարդ են կոչում»՝ այսպես էր ներկայացնում Նաիրա Զոհրաբյանին իր թիմակիցներից մեկը: Այսինքն՝ տղամարդ լինելը, վերջինիս պատկերացմամբ, ավելի բարձր արժեք է, քան կին լինելը: Այդ նույն տրամաբանությամբ տղամարդուն է վերագրվում ուժեղ, սկզբունքային, համարձակ լինելու առաքելությունը: Ցավոք, այս թեզն իր շարունակությունն ստացավ Նաիրա Զոհրաբյանի հետագա ելույթներից մեկում, երբ նա, վրդովված իր հասցեին սոցիալական ցանցերում հնչեցվող անձնական

բնույթի վիրավորանքներից և սպառնալիքներից, դիմեց իր հիմնական հակառակորդ Հայկ Մարությանի կողմակիցներին՝ ասելով. «Ասում եմ՝ տղամարդ ես, հրավիրում եմ բանավեճի, արի առանց Նիկոլի, արի տեսնենք, ոնց ես լուծելու Երևանի խնդիրները»: Ի պատասխան դրան, Զոհրաբյանի կին լինելու մասին հիշեցին Մարությանի թիմակից կանայք՝ հանդես գալով հաճախ շահարկվող մեկնաբանություններով, որ «կնոջը վայել չէ նման բառամթերք օգտագործելը»: Այս սցենարը, կարծես թե, դասական բնույթ է կրում քաղաքական թեժ իրավիճակներում:

Նշենք, որ քարոզարշավի ընթացքը կտրուկ փոխվեց այն պահից, երբ ընտրությունների առաջատար ուժը հանդիսացող «Իմ քայլը» դաշինքի կողմից հնչեցվեց «սև և սպիտակ» ուժերի մասին անհասցե մեղադրանքը, որն ի չիք դարձրեց որևէ ուժի կողմից ծրագրային դրույթներ ներկայացնելու հետագա բոլոր ջանքերը: Քարոզարշավի նման կտրուկ փոփոխությանը հատկապես ընդդիմացան կին թեկնածուները, արդարացիորեն զգալով, որ սև-սպիտակ ֆորմատով ընտրապայքարում իրենք անելիք չունեն: Ու թեպետ փորձում էին իրենց հրապարակային ելույթներում վերադարձնել ընտրարշավը ծրագրային քննարկումների դաշտ, սակայն ապարդյուն:

Մասնավորապես, Անահիտ Թարխանյանի քարոզարշավի փոխակերպմանը ընդդիմանալու փորձերը վերջացան նրա նկատմամբ սոցիալական ցանցերում սեքսիզմով համեմված էյջիզմի (տարիքային խտրականության) դրսևորումներով: Նրա նախընտրական հոլովակների տակ որոշ օգտատերեր անհարկի շեշտադրումներ ու վիրավորական որակումներ էին անում նրա տարիքի վերաբերյալ, այն դեպքում, երբ նույն և ավելի մեծ տարիքի տղամարդ թեկնածուների նկատմամբ նման որակումներ երբևիցե չեն հնչեցվել:

Տղամարդկանց և կանանց նկատմամբ ակնհայտ տարբերակված մոտեցման մի օրինակ էր նաև կայքերից մեկի սկսած շարքը՝ «Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող գեղեցկուհիները», որտեղ կին քաղաքական գործիչների հետ զրույցի առանցքը կանանց արտաքին տեսքն էր, այլ ոչ թե գաղափարներն ու ծրագրերը: Ավելորդ է ասել, որ հնարավոր չէ անգամ պատկերացնել, որ նույնը կարող է արվել տղամարդ թեկնածուների նկատմամբ: Ի դեպ, ընտրություններից հետո էլ լրագրողական դաշտում շարունակվեցին ավագանու կազմում ընդգրկված կանանց «գեղեցկուհիների» անվան տակ ներկայացնելու փորձերը:
Դիտարկելով քարոզարշավի ընթացքում WomenNet.am կայքում հրապարակված քաղաքական ուժերի առաջին տասնյակում ներկայացված կին թեկնածուների հետ ավելի քան 35 հարցազրույցները՝ կարելի է փաստել, որ անկախ կուսակցական պատկանելությունից նրանք որպես առաջնահերթ խնդիրներ էին նշում մանկապարտեզների, կանաչ գոտիների և քաղաքի հարմարավետության խնդիրները:

Քաղաքի արդար կառավարման սկզբունքները նախընտրական ծրագրերում

Դիտարկելով 2018 թ. սեպտեմբերի 23-ին անցկացված Երևանի ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների նախընտրական ծրագրերը գենդերային զգայունության տեսանկյունից, կարելի է փաստել, որ ծրագրերից ոչ մեկը չէր համապատասխանում գենդերային ուղղորդման սկզբունքներին, այսինքն՝ չէր տարանջատում սեռերի հատուկ կարիքներն ու պահանջները: Ավելին, գենդերային զգայունության ապահովման խնդիր որևէ կուսակցություն իր ծրագրում չէր դրել, իսկ քաղաքական դեբատներում հնչում էին կարծիքներ, թե կանանց խնդիրներ քաղաքային միջավայրում չկան, և բոլոր խնդիրները նույնն են ողջ բնակչության համար: Սակայն անկախ այդ կարծիքից ու գենդերային հիմախնդիրների վերաբերյալ կուսակցությունների դիրքորոշումից, շատ ծրագրերում կան դրույթներ, որոնք համապատասխանում են քաղաքի արդար կառավարման հայեցակարգին և, հետևապես, կարող են դիտարկվել որպես գենդերային զգայուն:

Քաղաքի արդյունավետ կառավարման մոդելը

Ըստ միջազգային մոտեցումների՝ քաղաքի արդյունավետ կառավարման մոդելը, մի կողմից, պահանջում է գործընկերային հարաբերությունների հաստատում պետության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև, քաղաքացիների ներգրավում կառավարման գործում, ինչպես նաև կանանց պատշաճ ներկայացվածություն քաղաքին վերաբերող որոշումների ընդունման մակարդակում: Մյուս կողմից՝ արդյունավետ կառավարումը ենթադրում է քաղաքային խնդիրների առաջադրում տարբեր սոցիալական խմբերի, այդ թվում ամենամեծ խմբի՝ կանանց կարիքների հաշվառմամբ: Պատահական չէ, որ քաղաքի արդյունավետ կառավարման հարացույցն առաջին անգամ առաջ է քաշվել եվրոպական ֆեմինիստուհիների կողմից: Ըստ էության, քաղաքային բնակչության կարիքների տարիքային և գենդերային առանձնահատկությունների հաշվառումը նշանակում է, որ քաղաքի հարմարավետությունը պետք է դիտարկվի մասնավոր կյանքի տեսանկյունից, որտեղ չափազանց մեծ է հատկապես կանանց դերակատարությունը: Օրինակ՝ կանանց կարիքները, հաշվի առնելով քաղաքում նրանց տեղաշարժման առօրյա նպատակները, ավելի բազմազան են, և նրանց կարիքների հաշվառումը ենթադրում է քաղաքային ենթակառուցվածքների հարմարավետության զգալի բարձրացում:

Կանայք նաև ավելի ակտիվ դերակատարում ունեն մի շարք խնդիրների լուծման հարցում: Օրինակ՝ քաղաքային իշխանությունների կողմից կարևորվող մի շարք հարցեր՝ աղբահանության մշակույթի բարձրացման, այդ թվում՝ աղբի տեսակավորման, դժվար է լուծել առանց կանանց

ներգրավման, նրանց քաղաքացիական մասնակցության ընդլայնման: Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ քաղաքի արդար կառավարման սկզբունքները հաշվի առնող ծրագրերը չեն կարող գենդերային զգայուն չլինել:

Երևանի ավագանու ընտրություններին մասնակցած կուսակցությունների նախընտրական ծրագրերի գնահատումը քաղաքի արդար կառավարման մոդելին համապատասխանության տեսանկյունից հնարավորություն է տալիս գնահատել այդ ծրագրերը կանանց շահերի, նրանց առօրեական փորձի տեսանկյունից և առանձնացնել այն դրույթները, որոնց իրագործումը նպաստավոր է կանանց տարբեր սոցիալական խմբերի համար:

Մասնավորապես, որքանո՞վ է նախընտրական ծրագրերում Երևանի տեսլականը՝

- **արդար,** այսինքն՝ արդյոք նպատա՞կ է դրվում ներգրավել քաղաքացիական հասարակությունը քաղաքի կառավարման հարցերում, այդ թվում ապահովել քաղաքին վերաբերող որոշումների կայացման մակարդակում գենդերային հավասարակշռությունը.
- **անվտանգ բոլորի համար,** այսինքն՝ նախատեսվո՞ւմ է, որ փողոցները, նրբանցքները, բարձրահարկերի շքամուտքերը լինեն լավ լուսավորված, ձմռանը՝ ձնամաքրված.
- **առողջ,** արդյոք նպատա՞կ է դրվում ավելացնել քաղաքի կանաչապատ տարածքները, ապահովել քաղաքի մաքրությունը աղբից և վնասակար արտանետումներից, երաշխավորել արդյունավետ և որակյալ բժշկական սպասարկում.
- **հարմարավետ,** արդյոք նախատեսվո՞ւմ է լուծել ենթակառուցվածքների և տրանսպորտի հարցերը՝ հաշվի առնելով բոլոր սոցիալական խմբերի առանձնահատուկ կարիքները:

Ծրագրերի նույնիսկ մակերեսային դիտարկումը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր քաղաքական ուժերն այս կամ այն կերպ փորձ են արել անդրադառնալ վերոնշյալ խնդիրներին: Առաջարկվել են տարբեր լուծումներ: Բացառություն է քաղաքին վերաբերող որոշումների կայացման մակարդակում գենդերային հավասարակշռության ապահովման հարցը, որը թեև ծրագրային դրույթ չէ, սակայն անուղղակի կերպով իր լուծումն է ստանում տվյալ կուսակցության ընտրական ցուցակում կանանց ու տղամարդկանց հավասար ներկայացվածությամբ, ինչը ապահովված էր միայն «Երկիր ծիրանի» կուսակցության ընտրական ցուցակում: Այս հարցում որպես առաջընթաց կարելի է դիտարկել այն փաստը, որ առաջին անգամ քաղաքապետի պաշտոնին էին հավակնում երեք կին, ինչպես նաև ընտրությունների մասնակցող կուսակցությունների կեսը 40-50% կին թեկնածուներ էին ներգրավել իրենց ցուցակներում:

Հետաքրքիր է, որ որոշ ծրագրերում օգտագործված է «արդար կառավարում» բառակապակցությունը: Օրինակ՝ «Լույս» դաշինքի ծրագրում «արդար կառավարման» մասին նշվում է, որ դաշինքը «իր գործունեության առանցք է դիտարկում արդար կառավարումը, որը միտված կլինի խնդիրների արդար լուծմանը»: Խոսքը Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքների համաձայն՝ քաղաքացուն մերձեցած, արդյունավետ և ապակենտրոնացված կառավարման համակարգի մասին է: Ըստ էության, ծրագրի որոշ դրույթներ համընկնում են արդար քաղաքի գենդերային զգայուն ըմբռնմանը, սակայն դրանց մեկնաբանությունը խիստ միակողմանի է: Օրինակ՝ քաղաքի անվտանգությունը դիտվում է միայն քաղպաշտպանության տեսանկյունից, ինչն անշուշտ կարևոր է, սակայն չի ներառում քաղաքի անվտանգության մասին կանանց տեսակետը:

Ի դեպ, արդար քաղաքի հարցը իր ծրագրում ներառել էր նաև ՀՅԴ-ն, որի ծրագրի մի բաժինը կոչվում է «Հանուն հոգատար և արդար Երևանի»: Այստեղ շարադրված են մի շարք կարևոր խնդիրներ, սակայն՝ գենդերային չեզոք դիրքերից.

- իրականացնել սոցիալապես առավել խոցելի խավերի աջակցության սոցիալական պաշտպանության ծրագրեր,
- մշակել և ներդնել սոցիալական բնակֆոնդի հայեցակարգ, երիտասարդ և բազմազավակ ընտանիքներին անհատույց կամ ցածր վարձավճարով տրամադրել բնակարաններ,
- ստեղծել տարեցների խնամքի և ժամանցի կենտրոններ,
- տեղաշարժվելու սահմանափակ հնարավորություն ունեցողների համար ապահովել լիարժեք միջավայր,
- վերանորոգել և վերազինել պոլիկլինիկաները, բարձրացնել մատուցվող ծառայությունների որակը և մատչելիությունը,
- ստեղծել անօթևանների գիշերային կենտրոններ:

Քաղաքի հարմարավետության հարցը

Առանձին ուշադրության է արժանի քաղաքի հարմարավետության հարցը, ինչը նշանակում է, որ քաղաքի ենթակառուցվածքները պետք է հարմարավետ կլինեն և կանանց, և տղամարդկանց համար, նպաստեն ընտանիքների և տնային տնտեսությունների ավելի հեշտ կենցաղվարմանը: Դա նշանակում է, որ աշխատող ծնողները չեն մտահոգվի երեխաների խնամքի հարցերով, որ կլինի մսուր-մանկապարտեզների և զարգացման կենտրոնների լայն ցանց:

Դա նշանակում է, որ յուրաքանչյուրի համար, անկախ սեռից, տարիքից, սոցիալական վիճակից, կլինեն իր հետաքրքրությունները բավարարելու համար հարմարավետ և մատչելի կենտրոններ, հաստատություններ և այլն: Դա նշանակում է, որ քաղաքի բնակիչներից ոչ մեկը չի ունենա տեղաշարժման սահմանափակում, իսկ դա նախևառաջ հարմարավետ, մատչելի, կայուն և օրվա բոլոր ժամերին աշխատող հասարակական տրասպորտի խնդրի լուծում է պահանջում: Հատկապես կանանց համար հարմարավետ քաղաքը նշանակում է նաև զարգացած ենթակառուցվածքներով քաղաք, ուր պրոբլեմներ չեն լինի երեխային մանկապարտեզ տեղավորելու, դպրոցական կյանքը կազմակերպելու, փողոցում և տրանսպորտի միջոցով մանկասայլակով տեղաշարժվելու և բազմաթիվ այլ խնդիրների առումով:

Մանկապարտեզների խնդիրը նախընտրական ծրագրերում

Ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերից մի քանիսը իրենց ծրագրերում անդրադարձ էին կատարել նախադպրոցական կրթության հարցին՝ բարձրացնելով այս ոլորտում կուտակված ամենատարբեր խնդիրներ: Ծրագրերում առավել մեծ ուշադրության էին արժանացել մանկապարտեզներում երեխաների հերթագրման և շենքային պայմանների հարցերը:

«Իմ քայլը» դաշինքը ծրագրում նախատեսում էր բարելավել նախադպրոցական հաստատությունների շենքային և բակային պայմանները, քարտեզագրել ՆԴՀ-ների շինություններն ու տարածքները, հնարավորության դեպքում վարձակալությամբ տրված շենքերը վերադարձնել

մանկապարտեզներին, նախադպրոցական տարիքի երեխաների էլեկտրոնային հերթագրման գործընթացը դարձնել թափանցիկ և առցանց տիրույթում հասանելի, ընդլայնել դրանց մատչելիությունն ու ներառականությունը:

«Լույս» դաշինքի ծրագրում նույնպես նախատեսվում էր մանկապարտեզների վարձակալությամբ տրված տարածքները աստիճանաբար վերադարձնել մանկապարտեզներին, 0-6 տարեկան երեխաների ծնողների համար հասանելի էլեկտրոնային հերթագրում իրականացնել: Նախատեսվում էր մշակել նախադպրոցական սննդի ռազմավարություն:

«Երկիր ծիրանի» կուսակցությունը խնդրին անդրադարձել էիր ծավալուն ծրագրի տարբեր բաժիններում: Այսպես, կուսակցությունը նախատեսում է բյուջեի միջոցներով վերանորոգել մայրաքաղաքի բոլոր նախադպրոցական հաստատությունները և կառուցել նորերը, վերացնել նախադպրոցական հաստատություններում հերթագրումները, բոլոր երեխաների համար ապահովել նախադպրոցական կրթության իրավունքը: Նախատեսվում է նաև ապահովել մանկապարտեզները առողջական տարբեր խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատող համապատասխան մասնագետներով, կարևորում է մշակութային-գեղագիտական դաստիարակությունը: Անդրադառնալով անվտանգության խնդրին՝ կուսակցությունն անհրաժեշտ է համարում անցկացնել բոլոր նախադպրոցական հաստատությունների շենքերի սեյսմակայունության մշտադիտարկում:

«Երևանի հանրություն» կուսակցությունների դաշինքը նախատեսում էր մանկապարտեզների հերթագրումը անել բաց հրապարակվող ցուցակներով, բարեկարգել ՆԴՀ-ների բակերը՝ նախատեսելով ներառական կրթության

իրականացման համար անհրաժեշտ պայմաններ: Հետաքրքիր մոտեցում է առաջարկվում սննդով ապահովման հարցին: Դաշինքի ծրագրում նշվում է, որ Երևանը պետք է ունենա իր գյուղատնտեսական ձեռնարկությունը, որը կարտադրի էկոլոգիապես մաքուր մթերք նախադպրոցական հաստատությունների համար, ինչի շնորհիվ կկրճատվեն սննդի ծախսերը, կվերահսկվի որակը:

ՕԵԿ-ի ծրագրում նախատեսվում էր անվճար մանկապարտեզների ցանցի զարգացում, դրանց շենքերի սեփականաշնորհման արգելքի պահպանում:

«Ժառանգություն» կուսակցությունը նախատեսում էր ավելացնել մանկապարտեզների թիվը:

ՀՅԴ ծրագրում նույնպես նախատեսվում էր ընդլայնել մանկապարտեզների ցանցը (թերբեռնված հիմական դպրոցներին կից բացել նախակրթարաններ):

ԲՀԿ-ն նշում էր, որ երևանցիները դժգոհ են նախակրթարաններից, բայց ինչպես էր պատրաստվում լուծել խնդիրը՝ չի մասնավորեցնում:

Մյուս կուսակցությունները խնդրին չեն անդրադարձել:

Հարմարավետությանն առնչվող այլ խնդիրներ

«Լույս» դաշինքի ծրագրում նշվում էր, որ քաղաքաշինական միջավայրում ապահովվելու է հաշմանդամություն ունեցող անձանց ազատ և անարգել տեղաշարժվելու հնարավորությունը: Նկատենք, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ թեքահարթակների խնդիրը նույնքան կարևոր է նաև մանկասայլակով տեղաշարժվող կանանց համար:

Նույն խնդրին անդրադարձ կար **«Երևանի հանրություն» դաշինքի** ծրագրում, որում նշվում է, որ քաղաքաշինական միջավայրում հաշմանդամություն ունեցող մարդկանց և

բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժման մատչելիությունն ապահովելու նպատակով մշակվելու և իրագործվելու են համապատասխան նախագծեր: Դաշինքը կոմունալ սպասարկման բարելավման մեծ ծրագիր էր նախատեսել: Առավել գրավիչ է բակային տարածքներում մանկական խաղահրապարակների և հանգստի գոտիների ստեղծման հարցը քաղաքային բյուջեում ներառելու հարցը: Մեծ բաժին կա՝ նվիրված առողջապահությանը, այդ ոլորտում սպասարկման որակի բարձրացմանը: Հիմնական անկյունաքարերն են՝ պոլիկլինիկական ծառայության աշխատառճի փոփոխումը, հիմված ԱԱՊ օղակի հզորացման վրա, և ընտանեկան բժշկի ինստիտուտի հզորացումը: Ընդգրկուն ծրագիր է նախատեսված նաև կրթության և մշակույթի ոլորտների բարելավման համար:

Կոմունալ սպասարկման բարելավում էր նախատեսում նաև **«Ժողովրդավարական ուղի» կուսակցությունը:** Հարմարավետության տեսանկյունից կարևոր է նաև բոլոր զբոսայգիներում հանրային զուգարանների կառուցման կարևորումը:

«Լույս» դաշինքի ծրագրում նախատեսվում էր վերանայել հանրակրթական դպրոցների կառավարման խորհրդի և տնօրենի ընտրության գործող կարգը՝ ապահովելով ծնողների և շահառուների մասնակցությունը գործընթացին, մշակել դպրոցական սննդի ռազմավարություն:

ԲՀԿ ծրագրում նախատեսվում էր դպրոցների, առողջապահական հիմարկների գործունեության բարելավում:

«Ժառանգություն» կուսակցությունը իր առջև դրել էր ևս մի խնդիր՝ վերականգնել մանկավարժների հեղինակությունը, հատկապես տարրական դպրոցում նվազեցնել դասարաններում աշակերտների թիվը, ներդնել կրթական

նոր, ժամանակակից մոտեցումներ: Ընտանիքների համար նպաստավոր է նաև ծրագրի այն կետը, որով կուսակցությունը կարևորում է սոցիալական շինարարությունը, որպեսզի պակաս եկամուտ ունեցող ընտանիքները կարողանան նվազագույն տոկոսադրույքներով հիպոթեքային վարկեր ստանալ առևտրային բանկերից՝ քաղաքապետարանի իրականացրած սոցիալական շինարարության ծրագրերից օգտվելու համար:

Նշված ոլորտներում **«Ժառանգություն» կուսակցության** գերակայություններն ու սկզբունքներն են՝ «Երևանցին պետք է 24-ժամյա ռեժիմով ապահովված լինի որակյալ և անխափան ջրամատակարարմամբ, ջրահեռացմամբ, գազամատակարարմամբ ու էլեկտրամատակարարմամբ, ինչպես պարտավորվել են նշված ծառայություններ մատուցող ընկերությունները»:

«Երկիր ծիրանի» կուսակցությունն առաջարկում էր յուրաքանչյուր վարչական շրջանում վերականգնել հանրային տարածքները՝ այգիներ, լճեր (ջրավազաններ), խաղահրապարակներ և այլն: Ծրագրում հատուկ բաժիններ կային՝«Սոցիալական զարգացման քաղաքականություն» և «Կրթության քաղաքականություն», որոնցում հանգամանորեն անդրադառնում է այդ հիմնախնդիրներին:

Հարմարավետ քաղաքը սոցիալական ուժեղ բաղադրիչ ունեցող քաղաք է, այդ տեսանկյունից հետաքրքիր էր **«Օրինաց երկիր» կուսակցության** ծրագիրը: Նախատեսվում է իրականացնել մայրության և մանկության սոցիալական ապահովության համակարգի ընդլայնում, երեխաների ամառային հանգստի կազմակերպում, ապահովել տարեցների համար ծերապարտեզների ցանցի ընդլայնում և պայմանների բարելավում, հաշմանդամություն ունեցող քաղաքացիների համար կենսագործունեության բարենպաստ

միջավայրի ձևավորում՝ հատուկ ենթակառուցվածքների ստեղծման միջոցով, ստեղծել և ընդլայնել խաղահրապարակները:

ՀՅԴ-ն նախատեսում էր ստեղծել տարեցների խնամքի և ժամանցի կենտրոններ,վերանորոգել և վերազինել պոլիկլինիկաները, բարձրացնել մատուցվող ծառայությունների որակը և մատչելիությունը, ստեղծել անօթևանների գիշերային կենտրոններ:

Քաղաքապետի կին թեկնածուների ծրագրերի առանձնահատկությունները

Թեպետ, ընդհանուր առմամբ, դիտարկված ծրագրերում այսպես թե այնպես կան դրույթներ, որոնք կարող են նպաստել ավելի արդար քաղաքի ստեղծմանը, սակայն հետաքրքիր է դիտարկել՝ ինչպե՞ս էին այդ հարցին անդրադարձել կանանց կողմից ղեկավարվող քաղաքական ուժերը:

«Երկիր ծիրանի» կուսակցությունը հարուստ փորձ էր կուտակել նախորդ ավագանու կազմում իր ակտիվ մասնակցության շնորհիվ: Ծրագիրն առանձնանում էր իր սոցիալական հստակ ուղղվածությամբ, որը երևում է գրեթե բոլոր բաժիններում: Բավականին մանրամասն էր ներկայացված սոցիալական քաղաքականությունը (մատչելի բնակարաններ, սոցիալական բնակարանների հատկացում կարիքավորներին, ժամանակավոր բնակելի կացարաններ անօթևաններին, սոցիալական բնակարանաշինություն): Ուշադրության էր արժանի ծրագրի «Սոցիալական զարգացման քաղաքականություն» բաժինը, որում նախատեսվում էր փողոցների ցանցի և բակային տարածքների զարգացում և բարեկարգում, արտաքին լուսավորության ցանցի բարելավում և արդիականացում (ի

դեպ, նախատեսվում է չլուսավորվող փողոցների, նրբանցքների, բակերի և խաղահրապարակների լուսավորում): Հատուկ բաժին էր նվիրված բնակչության սակավաշարժ խմբերի համար ենթակառուցվածքների ստեղծման քաղաքականությանը: Հանրային և մասնավոր տրանսպորտի ոլորտում քաղաքականությունը նույնպես սոցիալական բաղադրիչ ուներ՝ սոցիալական փաթեթներ ուսանողների, թոշակառուների և սոցիալապես անապահով խավերի համար, սմարթֆոնների համար կազմված հավելվածի միջոցով հնարավորություն՝ հետևելու անհրաժեշտ տրանսպորտի ժամանման հաճախականությանը և ժամերին: Որոշակի տեղ էր հատկացված ծրագրում նաև առողջապահական ծառայությունների մատչելիությանը և դրանց որակի բարձրացմանը: Ծրագրում ներկայացված էր վարչական կառավարման թափանցիկության տեսլականը, հատուկ բաժին էր առանձնացված, որը նվիրված էր քաղաքացիական հասարակության հետ համագործակցությանը: Ծրագրում մեծ մաս էր հատկացված շրջակա միջավայրի քաղաքականությանը և ռիսկերի կառավարմանը: Առանձին բաժին է կազմում «Կրթության քաղաքականությունը», որում նախատեսվում է կրթօջախների անվտանգության ապահովում, տնօրենների և ուսուցչական անձնակազմի անկախություն քաղաքային իշխանություններից, ուսուցչի սոցիալական ապահովվածության առաջնայնություն:

«Երևանի հանրություն» դաշինքն իր ուժեղ կողմն էր համարում քաղաքաշինական և ճարտարապետական լուծումները: Ծրագրի «Բարեխիղճ կառավարում» բաժնում կարևորվում է կոռուպցիայի հաղթահարումը և ներառական կառավարումը: Մանրամասն ներկայացված էին քաղաքաշինության և տրանսպորտի բաժինները, բայց հետաքրքիր էր նաև կոմունալ

ծառայություններին նվիրված բաժինը, որտեղ այլ միջոցառումների հետ մեկտեղ նախատեսվում էր ներառել քաղաքային զարգացման ծրագրերում և բյուջեում բակային տարածքներում մանկական խաղահրապարակների և հանգստի գոտիների կազմակերպումը: Ծրագիրն անդրադառնում էր նաև առողջապահության, կրթության և մշակույթի խնդիրներին: Առողջապահության ոլորտում նախատեսվում էր բարձրացնել կառավարման արդյունավետությունը, հիմական ուղղություններում ներառված էին պոլիկլինիկական ծառայությունների աշխատառճի փոփոխումը՝ նեղ մասնագետներով ներառմամբ, ընտանեկան բժշկի ինստիտուտի ամրապնդմամբ, շեշտը դնելով կանխարգելիչ բժշկության վրա: Որոշակի տեղ է զբաղեցնում ծրագրում կրթության քաղաքականությունը: «Էկոլոգիա և բնակելի միջավայր» բաժնում նախատեսվում է պայքար անապատացման դեմ, քաղաքի կանաչապատում, կանաչ քաղաքաշինության իրականացում: Հետաքրքիր է, որ «Մշակույթ» բաժնում նախատեսվում է կյանքի կոչել «Երաժշտական Հայաստան» ծրագիրը: Թեպետ ծրագիրը գենդերային չեզոք էր, սակայն այն ներառում էր կանանց կարիքների տեսանկյունից առավել կարևոր հիմախնդիրները:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ծրագրի հենքում դրված էր «կանաչ, խելացի» քաղաքի հայեցակարգը: Նախատեսվում էր քաղաքային նշանակության զբոսայգիներն ու անտառային պուրակները ծառայեցնել բնակիչներին: Հաջորդ կարևոր ծրագրային կետը սոցիալական բնակարանաշինության իրականացումն է, ընտանիքներին առավել մատչելի պայմաններով բնակարան ձեռք բերելու հնարավորության ընձեռում, կարևոր է, որ նախատեսվում է

վարկի տրամադրման ամսական վճարումները կատարում են 30 տարվա ընթացքում՝ առանց կանխավճարի: Կարևորվում է նաև ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած տրանսպորտային ցանցը, որը մատչելի կլինի նաև սահմանափակ տեղաշարժման հնարավորություններով քաղաքացիների համար: Ծրագրում շեշտադրված է նաև տրանսպորտի գնային քաղաքականության մատչելիության ապահովման անհրաժեշտությունը: Ծրագրում նշվում է, որ «Երևանի քաղաքապետարանը քաղաքում դպրոցների, նախակրթարանների և առողջապահական հիմնարկների գործունեության համար պատասխանատու կառույց է», և պատրաստակամություն է հայտնվում լուծելու այս ոլորտում տարիներով կուտակված բազմաթիվ չլուծված խնդիրները, բայց ինչպե՞ս՝ չի մասնավորեցվում: Ծրագրի ուժեղ կողմը ներդրումային քաղաքականությունն է:

* * *

Ուղերձ նորընտիր ավագանուն

Անդրադառնալով ընտրողների ամենամեծ թվով ձայներ ստացած «Իմ քայլը» դաշինքի ծրագրին նշենք, որ ծրագրի գլխավոր ուղենիշներից է Երևանը դարձնել անվտանգ, առողջ, հարմարավետ: Ուշադրություն գրավեց «Կրթություն» բաժինը, որում նախատեսվում է բարելավել նախադպրոցական հաստատությունների շենքային և բակային պայմանները, քարտեզագրել դրանք, հնարավորության դեպքում հետ վերադարձնել վարձակալությամբ տրված շենքերը, թափանցիկ դարձնել նախադպրոցական երեխաների էլեկտրոնային հերթագրման գործընթացը, ընդլայնել կրթական հաստատությունների մատչելիությունն ու ներառականությունը: Դրանով իսկ դաշինքն ապահովել է այդ ուղղությամբ իր գործունեության շարունակականությունը նախորդ ավագանիում՝ «Ելք» խմբակցության կազմում: Ընդհանուր առմամբ ծրագրի մեջ ներառված տարբեր ոլորտներում նախատեսվող միջոցառումները կյանքի կոչելու ճանապարհին կարևոր է, որ քաղաքի նորընտիր ավագանին և քաղաքապետը քաղաքի զարգացման պլաններում հաշվի առնեն ոչ միայն ավագանիում ներկայացված, այլ նաև մյուս քաղաքական ուժերի ծրագրերում առկա հետաքրքիր ու օգտակար գաղափարները, քանի որ դա բխում է քաղաքի բնակիչների շահերից: Բացի այդ, ցանկալի է, որ նորընտիր ավագանին իր գործունեության ընթացքում կարողանա ապահովել քաղաքի զարգացման բոլոր ծրագրերի գենդերային զգայունությունը՝ դրանով իսկ կյանքի կոչելով քաղաքի արդար կառավարման կոնցեպտի սկզբունքները:

Վերլուծական տեղեկանքը պատրաստվել է «ՊրոՄեդիա-Գենդեր» ՀԿ-ի փորձագիտական խմբի կողմից